ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 9 հուլիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Թովմասյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Հ. Հովակիմյանի

Քննության առնելով Աշոտ Հովսեփյանի և Արուսյակ Մարտիկյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Աշոտ Հովսեփյանի և Արուսյակ Մարտիկյանի (այսուհետ՝ Դիմողներ, ներկայացուցիչ՝ փաստաբան Տիգրան Խուրշուդյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2025 թվականի հունիսի 30-ին, որով Դիմողները խնդրել են. *«Ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածին տրված մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող»:*

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/33601/02/21 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողները նշում են, որ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածին տրված

մեկնաբանության պայմաններում, հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածին՝ խախտելով Սահմանադրության 10-րդ հոդվածը և 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը, քանի որ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում խախտվում են Աշոտ Հովսեփյանի՝ որպես վիճելի գույքի նախկին սեփականատիրոջ՝ իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, ինչպես նաև Արուսյակ Մարտիկյանի՝ վիճելի գույքի ներկայիս սեփականատիրոջ իրավունքները:

Դիմողները նաև նշում են, որ տվյալ պահին Արուսյակ Մարտիկյանը դեռևս զրկված է օրինական ճանապարհով ձեռք բերված գույքի նկատմամբ սեփականության իրավունքից, և վերջինիս սեփականության իրավունքը շարունակում է խախտվել: Ըստ Դիմողների՝ Արուսյակ Մարտիկյանը խնդրո առարկա գույքը ձեռք է բերել փոխհատուցմամբ, սակայն տեղի ունեցած դատավարությունների պատճառով մինչ օրս չի կարողացել գրանցել իր սեփականության իրավունքը: Ինչ վերաբերում է Աշոտ Հովսեփյանին, ապա, Դիմողների պնդմամբ, չնայած վերջինս պայմանագիրն ստորագրել է՝ ունենալով գույքի նկատմամբ սեփականության իրավունք, այդուհանդերձ, խախտվում են նրա իրավունքները՝ իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու մասով:

Դիմողները գտնում են, որ սեփականատիրոջ լիազորությունների ամբողջական շրջանակը՝ տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, կազմում է սեփականության իրավունքի բովանդակությունը: Այս ամբողջությունը, ըստ Դիմողների, օրենքով շնորհվում է սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի կրողի, և սահմանում է այդ իրավունքի իրականացման սահմանները, որոնք էլ ապահովում են սեփականատիրոջ լիակատար գերակայությունը գույքի նկատմամբ և երաշխավորում են սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը: Այս հանգամանքներում և ներկայացված փաստերի շրջանակներում, Դիմողների պնդմամբ, ստացվում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում խախտվում է իրենց սեփականության իրավունքը:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ:

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝* ***վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:***

Սույն անհատական դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ **թիվ ԵԴ/33601/02/21 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտը Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումն է, որը կայացվել է 2024 թվականի դեկտեմբերի 4-ին:**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը* ***հաջորդ օրվանից****, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:* Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի* ***վերջին ամսվա համապատասխան ամսաթվին****:* ***Կես տարով որոշված ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվարկվող ժամկետների կանոնները:***

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ հարկ է փաստել, որ Դիմողների՝ Սահմանադրական դատարան դիմելու համար Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված **վեցամսյա ժամկետի ընթացքն սկսվել է 2024 թվականի դեկտեմբերի 5-ից և ավարտվել է 2025 թվականի հունիսի 5-ին, այնինչ սույն անհատական դիմումը փոստային ծառայությանն է հանձնվել 2025 թվականի հունիսի 26-ին և Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2025 թվականի հունիսի 30-ին: Հետևաբար՝ սույն գործով լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչն էլ քննությունը մերժելու հիմք է:**

Անդրադառնալով Դիմողների այն պնդմանը, համաձայն որի՝ իրենք վերջնական դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կայացված որոշումը, ստացել են 2024 թվականի դեկտեմբերի 27-ին՝ հարկ է արձանագրել, որ **Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքն սկսվում է ոչ թե վերջնական դատական ակտի ստացման, այլ տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի *29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝* Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Աշոտ Հովսեփյանի և Արուսյակ Մարտիկյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Հ. Թովմասյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Հ. Հովակիմյան

9 հուլիսի 2025 թվականի
ՍԴԴԿՈ-32